Ինչո՞վ է հիացած Այազ Մութալիբովը

«Ազատ Վրաստան» թերթը իր Յուլիսի 17ի համարում ներկայացրել է Ա. Մութալիբովի եւ Զ. Գամսախուրդիայի մամլոյ ասուլիսը Վրաստանի լրագրողների հետ։ Մամլոյ ասուլիսում արտայայտուել են մտքեր, որոնք անմիջականօրէն վերաբերւում են մեզ՝ մասնաւորապէս Արցախի խնդրին, ինչը եւ առանձնաբար ներկայացնում ենք ընթերցողի ուշադրութեանը։

ԱՅԱԶ ՄՈՒԹԱԼԻԲՈՎ.- Մենք կապեր ունեցել ենք Տէր Պետրոսեանի հետ, եթէ դուք նրան ի նկատի ունէք։ Բաւականաչափ հանգամանալից ու բազմաթիւ կապեր։ Վերջին անգամ մենք խօսել ենք երեք ժամ Կրեմլում։ Զրոյցն առանձին էր, որի ընթացքում մենք պարզեցինք մեր դիրքորոշումները։ Ինձ հաճելիօրէն զարմացրեց այն, որ պրն. Տէր Պետրոսեանը ընդունեց ինքնավար մարզը կառավարելու Բաքուի իրաւասութիւնը։ Միեւնոյն ժամանակ, ես նրան յայտարարեցի, որ մենք քաղաքակիրթ հասարակութիւն ու պետութիւն ենք, եղել է ինքնավարութիւն, այն կը լինի, նշանակում է կը լինեն նաեւ նրա կառուցուածքները, սակայն որոշ ժամանակ յետոյ, երբ կը լուծենք որոշ տարրերի այնտեղ ներկայութեան հարցը, որոնք խանգարում են եւ՛ ձեզ, եւ՛ ինձ։ Նա բարձրացել է դարաբաղեան շարժման ալիքով։ Նա դա չի թաքցնում։ Եւ ես նրա երեսին դա ասացի։ Որոշ ժամանակ անց քեզ կը հարցնեն, թէ ինչո՞ւ Ղարաբաղը չես վերադարձնում։ Ղարաբաղն այստեղ առկայ է որպէս մանրադրամ։ Ա-ւաղ։ Մենք պայմանաւորուեցինք դրական որոշ բաների, մամուլում փոխադարձ վիրաւորանքները սառեցնելու շուրջ։ Որովհետեւ չի կարելի զանգուածային լրատուութեան միջոցներով ձեւաւորելով թշնամու կերպար գնալ բանակցութեան։ Զստացուեց։ Դա եղել է Նոյեմբերին, իսկ Յունուարին մեզ մօտ յարձակումներ սկսուեցին։ Ես չգիտեմ, թէ դրանք ում խմբաւորումներն են։ Լ. Տէր Պետրոսեանն ասում է, իսկ ես կարող եմ հաճոյքով նրան հաւատալ, որ նա չի իշխում իրադրութեան վրա։ Միգուցէ այնտեղ կան ուժեր որոնք ցանկանում են խանգարել նրան։ Բայց ԼՂԻՄի տարածքի վրա յարձակման, զինուորականների ըսպանութեան, ադրբեջանական լրագրողի սպանութեան փաստեր եղել են, կան հրկիզման փաստեր։ Դրանք չեն դադարում։ Ինչպէ՞ս կարելի է այս պայմաններում խօսել որեւէ բանի մասին։ Եւ դա անում են մարդիկ, Հայաստանում ու ԼՂԻՄում հանգիստը խառնողները։ Մենք հաւանաբար կը պայմանաւորուենք այդ ուժերը չեզոքացնելու շուրջ։ Յանուն ժողովուրդների հանգստութեան, մերձեցման։